Ճապոնիայի մասին շնորհանդես Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցում

2019 թվականի հոկտեմբերի 3-ին (Երք) Իջևան քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցում անցկացվել է Ճապոնիայի մասին շնորհանդես: Դեսպանության աշխատակիցներից բացի Ճապոնիան ներկայացրել է նաև մեկ տարի Ճապոնիայում ուսանած Հայ-Ռուսական համալսարանի ճապոներեն լեզվի դասախոս Քրիստինե Զաքարյանը՝ հիմնվելով սեփական փորձի վրա:

Դահլիճը լի էր աշակերտներով, ովքեր բազում հարցեր հնչեցրին: Շնորհանդեսից և հարցուպատասխանից բացի դեսպանության աշխատակիցները ներկայացրել են ճապոնական ավանդական օրիգամին և ուղղորդել աշակերտներին պատրաստել թղթե կռունկներ:

Դեսպան Յամադայի ողջույնի խոսքը

Կարատեի ցուցադրություն աշակերտների կողմից

Քրիստինե Զաքարյանը պատմում է Ճապոնիայի մասին

Աշակերտները ոգևորությամբ լսում են

Աշակերտները պատրաստում են թղթե կռունկներ

Ճապոնիայի խորհրդանիշները՝ պատրաստված աշակերտների կողմից

Դեսպան Յամադան և դպրոցի տնօրեն տկն. Պողոսյանը

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցին՝ միջոցառման կազմակերպման գործում աջակցելու, ինչպես նաև Քրիստինե Զաքարյանին՝ Ճապոնիայի մասին պրեզենտացիա անելու համար :